## *5.10. Արտոնագրային գործունեությունը 2020 թվականին*

2020թ. հանրապետությունում արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների) իրավական պահպանության հետ կապված գործունեությունն ունեցել է հետևյալ պատկերը.

### *5.10.1. Գյուտեր և օգտակար մոդելներ*

2020թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 70 գյուտի և 29 օգտակար մոդելի հայտ, որոնցից 87-ը՝ ազգային, 12-ը՝ օտարերկրյա հայտատուներից: 1992թ-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ստացված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 4 871: Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից 2020թ. ներկայացվել է 4 հայտ: 1997-2020թթ. ընթացքում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 55 եվրասիական հայտ:

2020թ. գործավարությունն ավարտվել է 126 հայտով, ընդ որում, 70 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 33 հայտով՝ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 16 հայտով՝ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին, գյուտի և օգտակար մոդելի 7 հայտով՝ արտոնագրեր տալն ամբողջությամբ մերժելու մասին: Ինչպես նաև կայացվել են 1 գյուտի արտոնագրերով՝ արտոնագրաունակության մասին եզրակացության հրապարակման մասին որոշումներ: 2020թ. տրվել է գյուտի 72 և օգտակար մոդելի 29 արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին՝ գյուտի 7 արտոնագիր:

2020թ. 3 424 գյուտի արտոնագրերից ՀՀ տարածքում գործում է 189-ը, իսկ օգտակար մոդելի 601 արտոնագրերից՝ 109-ը: ՀՀ տարածքում գործում է 5 244 եվրասիական արտոնագիր:

Ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի քանակն ըստ տեխնիկայի բնագավառի
(ըստ Մադրիդյան արձանագրությունների դասակարգչի /ՄԱԴ/), 2020թ.

*միավոր*

| | | Բնագավառը | Ընդամենը |
|---|---|---|---|
| A | Մարդու կենսական պահանջների բավարարում | Բժշկություն և անասնաբուժություն | 15 |
| | | Սննդամթերք և ծխախոտ | 1 |
| | | Դեղեր և դեղամիջոցներ | 15 |
| | | Գյուղատնտեսություն | 2 |
| | | Հագուստ և կենցաղային առարկաներ | 11 |
| B | Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ | Նյութերի մշակում, շերտավոր նյութեր | 3 |
| | | Տրանսպորտ | - |
| | | Ֆիզիկական և քիմիական գործընթացներ | 2 |
| C | Քիմիա, մետաղագործություն | Անօրգանական քիմիա | 5 |
| | | Օրգանական քիմիա | 7 |
| | | Մետաղագործություն և էլեկտրոլիզ | - |
| | | Ներկեր, վառելիք, կենդանական և բուսական յուղեր | 2 |
| | | Կենսաքիմիա, շաքար, կաշիներ | |

| | | Բնագավառը | Ընդա-մենը |
|---|---|---|---|
| E | Շինարարություն, լեռնագործություն | Շինարարություն | 4 |
| F | Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ և պոմպեր, զենք և ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ | Շարժիչներ և պոմպեր | 5 |
| | | Լուսավորում, ջեռուցում, սառնարանային տեխնիկա | - |
| G | Ֆիզիկա | Չափում և օպտիկա | 8 |
| H | Էլեկտրականություն | Էլեկտրական տեխնիկա | 10 |
| Այլ բնագավառներ | | | 9 |
| Ընդամենը | | | 99 |

### *5.10.2. Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ*

2020թ. ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 2 418 հայտ (1 900ը՝ ազգային հայտատուներից): Ապրանքային նշանների 2 424 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ է կանչվել 61 հայտ, 156 հայտով կայացվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշում: Գրանցվել է 1 868 ապրանքային նշան (1 467-ը՝ ազգային հայտատուների անուններով): Նշանների միջազգային գրանցման մասին մադրիդյան համաձայնագրի և դրա արձանա-գրության շրջանակում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշան-ների միջազգային գրանցման մասին 2 710 ծանուցում: Միջազգային ծանուցումներով կայացվել է 2 107 որոշում ապրանքային նշաններին իրավական պահպանություն տրամադրելու վերա-բերյալ, նախնական մերժման մասին՝ 1 002, իսկ վերջնական մերժման մասին՝ 254 որոշում: ՀՀ-ից ներկայացվել է միջազգային գրանցման 27 հայտ:

2020թ. ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալություն է ներկա-յացվել 33 արդյունաբերական նմուշի հայտ (27-ը՝ ազգային հայտատուներից), որոնցից 28-ը ստացել է վկայագիր: Արդյունաբերական նմուշների Հաագայի համաձայնագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 118 ծանուցում:

Գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերի քանակն
ըստ հայտատուների երկրների, 2020թ.

*միավոր*

| | Ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|
| | | ըստ ազգային ընթացակարգի | Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակում |
| Հայաստան | 1 900 | 1 900 | - |
| Անտիգուա և Բարբուդա | 3 | - | 3 |
| ԱՄՆ | 344 | 125 | 219 |
| Ավստրալիա | 7 | - | 7 |
| Ավստրիա | 22 | - | 22 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 6 | 5 | 1 |
| Բելառուս | 49 | - | 49 |
| Բելգիա | 28 | 2 | 26 |
| Բոսնիա և Հերցեգովինա | 1 | - | 1 |
| Բուլղարիա | 33 | 2 | 31 |
| Բրազիլիա | 3 | - | 3 |
| Բարբադոս | 4 | 4 | - |
| Բելիզ | 8 | 1 | 7 |

| | Ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|
| | | ըստ ազգային ընթացակարգի | Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակում |
| Գերմանիա | 217 | 21 | 196 |
| Դանիա | 21 | 2 | 19 |
| Դոմինիկյան Հանրապետություն | 1 | - | 1 |
| Եգիպտոս | 3 | 3 | - |
| Էստոնիա | 5 | - | 5 |
| Թաիլանդ | 2 | 2 | - |
| Թունիս | 1 | - | 1 |
| Թուրքիա | 58 | - | 58 |
| Ինդոնեզիա | 5 | - | 5 |
| Իռլանդիա | 17 | 6 | 11 |
| Իսպանիա | 51 | - | 51 |
| Իսրայել | 15 | 10 | 5 |
| Իտալիա | 145 | 3 | 142 |
| Իրան | 6 | - | 6 |
| Լատվիա | 9 | - | 9 |
| Լեհաստան | 26 | 3 | 23 |
| Լիբանան | 2 | 1 | 1 |
| Լիխտենշտայն | 9 | - | 9 |
| Լիտվա | 7 | - | 7 |
| Լյուքսեմբուրգ | 45 | 3 | 42 |
| Խորվաթիա | 2 | 2 | - |
| Կայմանյան կղզիներ | 7 | 6 | 1 |
| Կանադա | 16 | 6 | 10 |
| Կիպրոս | 70 | 7 | 63 |
| Կորեայի Հանրապետություն | 96 | 27 | 69 |
| Կուբա | 1 | 1 | - |
| Հնդկաստան | 27 | 4 | 23 |
| Հորդանան | 1 | 1 | - |
| Հունաստան | 3 | 2 | 1 |
| Հունգարիա | 57 | - | 57 |
| Ղազախստան | 34 | - | 34 |
| Ճապոնիա | 67 | 22 | 45 |
| Մակեդոնիա | 1 | - | 1 |
| Մեքսիկա | 8 | 7 | 1 |
| Միացյալ Թագավորություն | 75 | 9 | 66 |
| Մոլդովա | 7 | - | 7 |
| Մոնակո | 5 | - | 5 |
| Նիդերլանդներ | 56 | 8 | 48 |
| Նոր Զելանդիա | 1 | - | 1 |
| Նորվեգիա | 3 | - | 3 |
| Շվեդիա | 20 | 4 | 16 |
| Շվեյցարիա | 214 | 63 | 151 |
| Շրի Լանկա | 1 | 1 | - |
| Չեխիա | 8 | - | 8 |
| Չինաստան | 350 | 30 | 320 |
| Պորտուգալիա | 9 | - | 9 |
| Պուերտո Ռիկո | 1 | - | 1 |
| Ռումինիա | 9 | - | 9 |
| Ռուսաստանի Դաշնություն | 626 | 52 | 574 |
| Սան Մարինո | 2 | - | 2 |
| Սեյշելյան կղզիներ | 5 | 3 | 2 |
| Սինգապուր | 26 | - | 26 |
| Սլովակիա | 6 | - | 6 |

| | Ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|
| | | ըստ ազգային ընթացակարգի | Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակում |
| Սլովենիա | 10 | 2 | 8 |
| Վիետնամ | 3 | - | 3 |
| Վիրջինյան կղզիներ | 9 | 3 | 6 |
| Վրաստան | 25 | 12 | 13 |
| Տաջիկստան | 1 | - | 1 |
| Ուզբեկստան | 7 | - | 7 |
| Ուկրաինա | 82 | 6 | 76 |
| Քաթար | 5 | 3 | 2 |
| Ֆինլանդիա | 32 | 27 | 5 |
| Ֆրանսիա | 81 | 11 | 70 |
| Այլ | 6 | 6 | - |
| Ընդամենը | 5 128 | 2 418 | 2 710 |

### *5.10.3. Հրապարակումներ*

2020թ. հրատարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 24 համար՝ հայերեն և ռուսերեն, որոնց մեջ պաշտոնական տեղեկություններ են հրապարակվել 72 գյուտի և 29 օգտակար մոդելի արտոնագրերի, 29 արդյունաբերական նմուշի վկայագրերի, 1 868 գրանցված ապրանքային նշանների մասին: 2020թ. հրապարակվել է «Ապրանքային նշանների հայտեր» տեղեկագրի 24 համար:

### *5.10.4. Գրանցված օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցում, լիցենզիաների տրամադրում և իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում*

Քննարկված և գրանցված դիմումների քանակը, 2020թ.

*միավոր*

| | Ընդամենը |
|---|---|
| Ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցում | 130 |
| Ապրանքային նշանների լիցենզիաներ | 28 |
| Ապրանքային նշանների ենթալիցենզիաներ | 1 |
| Ապրանքային նշանների լիցենզիայի փոփոխություն | 5 |
| Ապրանքային նշանների ենթալիցենզիայի փոփոխություն | |
| Արտոնագրի զիջում | 2 |
| Արտոնագրի բաց լիցենզիայի մասին դիմում | 1 |
| Ապրանքային նշանների լիցենզիաների չեղյալ հայտարարում | 6 |
| Արտոնագրի ոչ բացառիկ լիցենզիա | 4 |
| Արտոնագրի լիցենզիայի չեղյալ հայտարարելու մասին դիմում | |
| Ապրանքային նշանների ֆրանչայզինգի | |
| Արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքի փոխանցում | 1 |
| Արդյունաբերական նմուշի լիցենզիայի փոփոխություն | 1 |
| Ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում | 838 |
| Արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարա-ձգում | 25 |
| Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարված փոփոխություններ | 712 |
| Ընդամենը | 1 754 |

2020թ. պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 1 868 ապրանքային նշանների վկայագիր, 72 գյուտի արտոնագիր, 29 օգտակար մոդելների արտոնագիր և 29 արդյունաբերական նմուշների վկայագիր: